

Համեմատե՛ք Տուղբուկ Ասլանչահի վիճակին հետ, զի երբ ան ալ իմիրներէն լքուած երկրին մէջ թափառայած կը շրջէր, Հայոց (Խլաթի) թաղաւորէն օղնութիւն կը հայցէ, անոր սրտին զթուլթեան ապաւինելով, սակայն Հայ թաղաւորը կը զլանայ, եւ որուն համար իր անունն ալ կ'անցնի պատմութեան մէջ իբր ազա՛ն :

Երբ Իբն Բիբիի երկին Հայաստանի Հա-
յող մասին ամփոփողքը կը վերջացնենք,
կ'արժէ առանձնապէս մատնանիշ ընել երկու
կարեւոր կէտեր որոնք աւաղ նշանակութիւն
ունին Հայ կիլիկեան պատմութեան համար:

$$U \cdot ULUB = 4ULNNNU$$

Հ. Ալիշան Սիսուանի¹ մէջ այս բերդին մասին հետեւեալ կերպով կ'արտայայտուի. «Հետաքննելի է մեզ գիտել եթէ ի տէրութեան մերոյս Լեւոնի ի վերայ ծովեղբերացս մինչեւ յԱռալիա, յոյր ձեռս էր ծովաբերդ այս. զի ոչ ի ցուցակի անդ բերդորէից եւ բերդատեարց հանդիսացելոյ ի թագապապութեան Նորին, եւ ոչ ալլուր յիշի այսու Կոռակեսիոն անուամբ, եւ ոչ Ալալայ, որպէս կոչի զարդիս. եւ ալլովքն եւս, որովք կոչէին զայն իտալացի վաճառականք եւ նաւաղք միջին դարուց, երբեմն Կանդելոր, Candelor, որ եւ Calandos եւ Scalandros, Calanders, երբեմն Castel Ubaldo. Բերդ Ուբալդոյ, կամ սոսկ Baldo Պալտոյ: Բայց ես հաւանեալ եմ թէ սա է կոչեցեալն ի Ժամանակաց նոցին ի մերոցս Հայոց Կալօնօռոս: (Անդ էջ 312-313): Ինչ որ Ալիշան երկար պատճառաբանութիւններով կ'աշխատէր ապացուցանել թէ Ալալայ, նախապէս Կալօնօռոս կը կոչուէր, Իբն Բիբի մեղի կը ներկայացնէ իբր իրողութիւն (հմմտ. Հ. Ա. 1960 թ. 4-6, էջ 168-169), որով ալլեւս տարակոյս չի մնար: Ալալեղդին կիւ Վարդի ձեռքէն Կալօնօռոս բերդը գրաւելէն յետոյ անոր մարմարեայ բարձունքը կը հրամայէ պարիսպներով ամրացնել եւ իր բարձր անուան համապատասխան բերդն ալ կոչել Ալալայ (հմմտ. Իբն Բիբի, Սելջուկեան Պատմութիւն էջ 109):

¹ Հ. Ղ. Ալիշան, Սխուռան, Համազգրութիւն
Հայկական Կիլիկիոյ, Վենետիկ — Ս. Ղազար 1885,
էջ 312-315:

**Բ. Հեթո՞ռի՞ւրի երկլեզուի ես Ան Դրսւն երո՞ւմ
ՀԱՐՅԸ**

Եւրոպական դրամագէտներ, ինչպէս Հ. Կ. Սիպլիւեան կը յիշէ իր Դասաւորութիւն Ռուբէնեան Դրամոյ Յաւելուածին մէջ, Հեթումի երկլեզուեան դրամները կը համարին արդիւնք Հեթումի հպատակութեան Ռումի սելջուկեան իշխանութեան հանդէպ: Մինչդեռ ինքը, Սիպլիւեան այն համոզումն ունէր թէ «Աս երկլեզուեան ստակները բարեկամական կապակցութեան ու յարաբերութեան եւ միանգամայն վաճառականութեան դիւրութեան համար՝ երկու սահմանակից տէրութեանց մէջն ալ անցնելու որոշուած ստակներ էին, ինչպէս որ Ռուսաց եւ Թաթարաց լեզուաւ կոխուած երկլեզուեան ստակներէն, ու Սիկլիւայի մէջ Նորմաններուն տպել տուած լատիներէն ու արաբերէն երկլեզուեան ստակներէն ալ յայտնի է, որոնք նոյնպէս վաճառականութեան դիւրութեան համար կոխուած էին: Մեր աս պատճառները չէ թէ Կիլիկեցոց Թագաւորութեան զօրութեան ջատագովութիւն մընէլու մտօք է, այլ միայն ճշմարիտ պարագայ մը երեւան հանելու համար: Ռուբինեանք թէպէտ շատ անգամ մեծամեծ քաջութիւններ զօրծած ըլլան, սակայն զիտենք թէ իրենց տէրութիւնը փոքր էր եւ ամէն կողմանէ անհաշտ թշնամիներէ պաշարուած: Բայց չենք ուզեր որ պատմական եւ հնագիտական պարագաներն այլազգ ցուցցած ատեն՝ պատճառներու եւ հաւանակաւորութեան աստիճաններուն միտ չընկնով՝ Ռուբինեան երկլեզուեան դրամ մը տեսնուելուն պէս, առանց ուրիշ քննութեան, իբրեւ հպատակութեան նշանակ ու հարկատուի ստակ համարուի» (Յաւելուած՝ Ռուբինեան Թագաւորներու մինչեւ հիմայ չհրատարակուած դրամները Վիեննա 1892 թջ 21-22) :

Սիպրիլեանի այս կարծիքը դրեթէ կը կրկնեն յաջորդ դրամադէտները: Այսպէս օր. Կ. Յ. Բաումալեան (Հայկական Ընդհ. դրամադիտութիւն էջ 24-28): «Սեւճուկեան սուլտաններու անունները կրող դրամներու շարքին մէջ մեզ համար ամենէն կարեւորն ու հետաքրքրականները, սակայն, Հայաստանի իրիկոյ մայրաքաղաքին՝ Սոյոյ մէջ տպուած երկլեզուեան դրամներն են, արարերէն հասեալն (էջ 24): ... Սակայն՝ ասոնք սեւճուկեան չեն, այլ յաւատ հայկական, որոնք Հիթումի կողմէ տպուած են, ի յիշատակ

բարեկամութեան եւ դաշնակցութեան Իկո-
նիոնի յիշեալ երկու սուլտաններուն հետ» (էջ
125-126) :

125-126) :
 Հէթում Ա. (1226-1269/70) Թագաւորն
 միայն յատուկ են երկկէղուեան դրամներ,
 ասոնք երկու տեսակ են: Առաջինները կը
 ներկայացնեն մէկ կողմը «Հէթում Թագաւոր»
 ընթերցուածը, միւս կողմը սելջուկեան սուլ-
 տաններէն Ալայեղդէն Քայքորաղի, որդի
 Քալխոսրովի անունը: Այս դրամները ան-
 թուական են եւ փողերանոցի վայրն ալ ան-
 ծանօթ: Իսկ միւս դրամները կը կրեն մէկ
 կողմը նոյնպէս Հէթում Թագաւոր Հայոց,
 երկրորդ կողմը կը կարդանք Ղիսսեղ-
 դէն Քալխոսրով, որդի Քայքորաղի: Աս
 վերջիններս ունին թէ թուական եւ թէ
 կոխուած վայրը: Ոմանք ունին 637 Հիջրէթի
 = 1239, միւսները 641 = 1243 թուական,
 կոխուած կամ տպուած ի Սիս:

Ի՞նչ առթիւ հրապարակ հան-
այս դրամները: Հայ պատմագիրներու մօտ
դժբախտաբար չենք հանդիպիր հայկական
դէպքերու մասին տեղեկութիւններու: Բա-
րեբախտութիւն մըն է, որ ճիշդ ա՛յն երկր-
դուեան դրամներու մասին, որոնց ոչ թուա-
կանն եւ ոչ ալ կոխուած վայրը ծանօթ է
Ի՛րն Իրիւի շնորհիւ թանկարժէք վիպութիւն
մը կ'ոճեցնանք:

մը կ'ունենանք։

Սելջուկեան սուլտանները շատ յաճախ դուրծ ունեցած են Ռուբրիկեան Թաղաւորներու հետ, մերթ քարեկամական եւ յաճախ Թշնամական վերաբերումներով։ Մէկ երկու դարերու այդ դրացնութիւնը՝ բարեկամական Թէ Թշնամական, բազմաթիւ առիթներ պէտք էր ընծայած ըլլար երկեզուեան դրամներու հրապարակ հանուելուն։ Սակայն մինչեւ այսօր միայն Հեթումեան շրջանին եւ այն 1226 - 27, եւ 1239, 1243 թուականներու կը ըով օտուուած այդ կարգի դրամներու կը հանդիպինք։ Փոքրիկ դէպք մը ցէր երբ 1199ին Ղիսսեղդէին Քըլըջ Ասլան կ'ապաստանէր Լեւոնի մօտ։ Նոյնպէս Կեսարիայի պաշարուած երկակողմանի բաշարուած առթիւ կըրուած երկակողմանի բաշարեկամական դաշինքը Լեւոնի եւ Իզդեղդէինի միջեւ (1211)։ Դարձեալ երբ Լեւոն Ա. Հայոց Թաղաւորը 1216ին Անտիոքի գրաւումով դրացած էր, Իզդեղդէին Քայթաուտ, անշուշտ Բոհեմունդի դրամով, յարձակում կը գործէր Կիլիկիայի վրայ եւ զերի կը վարէր Զայ բանակի սպարապետն ու մի քանի Հայ

գործավարներ, որոնց ազատութեան համար, մէկուկէս տարի երկար ձգձգումէ յետոյ, հաղիւ հաւանեցաւ Լեւոն, Սմբատի¹ համեմատ, Լուլուա եւ Լաւգատ բերդերը զոհել, «իսկ յորժամ էառ զԱնտիոք, Քաջբաղ պուլտանն իկոնիոյ, խռովեցաւ ընդ նմա, եւ եկն բազում զօրօք ի վերայ Կապիւուն, նեղեաց զնա եւ ոչինչ կարաց առնել. ապա յազմանէ Հարին կարան զգունդստապլն Հայոց Կոստանդին, զորդի քեռոյն Թագաւորին Լեւոնի, եւ զԿոստանդին որդի Հեթմոյ, եւ զԵրիւ Սահակ, զտէրն Մաղվայոյ եւ այլ իշխանս ընդ նոսա, եւ գնացին ի տեղի իւրեանց: Իսկ ի Թուին Ոկլ ետ Թագաւորն Լեւոն զբերդն Լուլուա եւ զԼոգատի եւ աղատեաց զկայանաւոր իշխանսն»: Իբն Ռիբի Համեմատ Լեւոն յանձն կ'առնէր անոնց ազատութեան համար տարեկան վճարել քսան հազար դէնար եւ 500 ձիաւոր ուղարկել պատերազմի պարագային իւր օգնական ոչ ք: Այս կարեւոր դէպքերուն համար ոչ մի երկ-

1. Հասաճ է մեր ձեռքը:

Լեզուեան զբամ հասած է մեր ճշմարիտ
Միջնորդ, երբ կրկին Անտիոքի իշխանին
Բոհեմոնդ Դ. ի սաղաքանքներով Այալեզդէին
Քաղաքապետ 1225ին՝ աշնան Կիլիկիա կ'արշա-
ւէ եւ այդ առթիւ բազմաթիւ բերդեր եւ ամ-
րոցներ կը զբաւէ, Կոստանդին՝ Հեթումի
հայրը, խոհեմութիւն կը համարի սուլտանին
հետ համաձայնութեան դալ. ըստ Իբն Բի-
բիէ՝ հետեւեալ պայմաններով. «Ամէն տարի
1000 ձիաւոր եւ 500 արեւմտաւոր ուղարկել,
2. դրամները սուլտանին անունով կոխել
տալ (զարդարել), 3. պատերազմի սուգանքը
կրկնապատիկով վճարել, զբաւուած ծովե-
զերեայ 30 բերդերն ալ կը մնային սուլտանի
զբերիչխանութեան տակ, զրեթէ ամբողջ
Իսաւրիան (հմտ. Die Seltshuken-
geschichte էջ 142) :

գրեցի (հ. 142) :
Իբն Բիբի, ինչպես սկիզբը յիշեցինք, իր
գործը գրած է իբր Ղուցաղներդութիւն, այս
պատճառով առ հասարակ միակողմանի է,
իր Ղուցաղին՝ մանուսանդ Ալայեղղինի
միայն քաջագործութիւնները պերճաշուք կը
պատմէ, իսկ պարտութիւնները՝ շատ հարե-
ւանցի : Սակայն որքան ալ չափազանցուած
նկատենք իր տեղեկութիւնները, պատմական
իրողութիւն մըն է թէ Հեթում այդ դաշինքի
հիման վրայ հրապարակ հանած է այդ երկ-

2 Մթբառայ Սպարապետի Տարեգիրք, Վենետիկ
1956, էջ 221-222:

այս հոգեհայտ Գոհար խաթուն... և արդե եղ
զսա յիշատակ ի քաղաքն Չմշկածագ ի դուռն
սուրբ Կարապետին, որ կոչի Կարմիր վանք ի
Ժամանակա առաջնորդութեան և զիտողութեան
Կ. Պօլսի տէր Յովհաննէս աստուածա-
բան վարդապետին: Յիշեցէք... Կեսարացի
զտէր Պետրոսն և իւր որդին Երեմիայ
զպիւրն, որ բազում աշխատանք ունին զսուրբ
Աւետարանս գրելոյն և զի սակաւ քան զյո-
ւով աշխատեցան զսրբագրելն ի յառ և զնելն
գրքին» (Ակինեան, Հաւաք. Յիշատ. էջմ.
213):

13. 1684ին առաջնորդ է Աւետիս վար-
դապետը, որուն և խաչատուր աստուծոյի
(Հմմտ. Թ. 11) Ժամանակը գրչագրութեան
մէջ անուանի կը հանդիսանայ Արսէն:

«Գրեցաւ Աւետարանս ի թուականութեան
Հայոց ՌՃԼԳ (1684) ամին ձեռամբ...
Արսէն արեղիս ի Չմշկածագ, ի Կարմիր
վանքս ընդ հովանեաւ Ս. Կարապետին և Ս.
Սարգիսին և Ս. Նշանին... յառաջնորդութեան
սուրբ ուխտիս Աւետիս վարդապետի...
այլ և սուրբ ուխտիս սպասաւոր է անձն
կրանաւորքն, որ կան ի յայս ձեռարանին...
յիշեցէք զվարդապետն իմ զտէր Ներսէսն և
զԵրեմիայի զտէր Յովհաննէս» (Թորոս Աղբար
Բ. էջ 370. Բիւզանդիոն 1906, Թ. 3014):

14. Միեւնոյն անձը կը գրէ Մաշտոց մը
...«Յառաջնորդութեան սուրբ ուխտիս Աւե-
տիս վարդապետին և Չ. անձն կրանաւոր-
քին որ կան յայս քարաժեռ յանապատին»
(Tisserant, Cod. Arm. Bibl. Vaticanae էջ
127):

15. Դարձեալ Արսէն 1693ին վերստին կը
նորոգէ և կը կազմէ Աւետարան մը, որ կը
գրուի «ի յիշատակ ի Կարմիր վանքս» (Թո-
րոս Աղբար Բ. էջ 365—366. Բիւզանդիոն
1906, Թ. 3014):

16. Կարեւոր տեղեկութիւններ կը բո-
վանալէ մանաւանդ վանքին դիրքի մասին
հետեւեալ Յիշատակագրութիւնը «Յիշատակ
է սուրբ Աւետարանս Բասե(ն)ցի՞ Արեքսիա-
նոս արեղիս ի դուռս սուրբ Կարապետիս և
սուրբ Աստուածածնիս և սուրբ Հրեշտակա-
պետացն Գաբրիէլի և Միքայէլի և այլ բազ-
մահաւաք սրբոցս, որ առաւ կան հաւաքեալ:

Եւ Արեքսիանոս գրեցի Աւետարանս և
եղի յիշատակ ինձ և ծնողաց իմոց Մարտի-
րոսին և Եղիսաբեթին:

Դարձեալ աղաչեմք զձեզ առաջնորդք և

միաբանք սուրբ ուխտիս Կարմիր վանիցս, որ
ինամ ածէք սորա և լաւ բռնէք: Աղաչեմ
զձեզ եղբարք, եթէ ի յարկածից չարին ելանէ
Աւետարանս ի Կարմիր վանացս և երթայ
այլ տեղ թէ հեռու և թէ ի մաւտու, դար-
ձուցէք ի վանքս: ...2ի Կարմիր վանքս ի
վերայ սպառնալ քարի է, հողն կարմիր է,
յարեւելից կողմն Աղբարին է, և Պաւղանն,
յարեւմտից դիմն սուրբ էհան, Հաղարին և
Աղկաւն, հարաւային կողմն Չմշկածագ քա-
ղաքն, հիւսիսային կողմն Ակնեւն և Սեղըն-
կայ լեռն...: Յիշեցէք... զԱրսէն քար-
տողն, որ մեղապարտ ձեռաւք հպեցա(յ) ի
սուրբ Աւետարանս» (Լալայեանց, Յուլյ.
Հայ. Զեռ. Վասպ. էջ 535—536):

Կարմիր վանքն ալ խառնաշաւի վանքի
հետ Չմշկածագի առաջնորդներու գործու-
րանքին առարկայ եղած է և անոնց հովա-
նաւորութեան և իր ներքին առաջնորդնե-
րու ղեկավարութեան տակ եղած է լսարան
ու ձեռարան, ուր համալսարան էն պարա-
վաներու համաձայն բաւական թուով միա-
բաններ և զբաղած զիտութեամբ և ժողո-
վուրդին կրօնական կարիքներով: Քարաժեռ
անապատը չէ եղած վանողական, այլ ձգիչ
վայր մը: Ունեցած է քանի մը եկեղեցիներ
կամ մատուռներ, որոնք Ժամանակի ընթաց-
քին նորոգութիւններ տեսած են (Հմմտ.
վերջ յիշատակագրութիւններ և Վահէ
Հայկ, Պարբերդ և իր ոսկեղէն դաշտը, էջ
553 և ն. և կարեւոր՝ Բիւզանդիոն 1906,
Թ. 3014): Ունեցած է շատ հող (Մասիս
1886, էջ 819—820):

5. ԿՈՂՈՒՅ՝ Ս. ԼՈՒՍԱՆՈՐՁԻ ՎԱՆՔԸ

Պարեան Չմշկածագի Կարմիր վանքի Ս. Նշան
վանքի մերձ կը գնէ այս վանքը, որ երբեմն
համանուն վանք մը յիշած էր նաեւ Շապին
Գարահիսարի վանքերու շարքին մէջ (Հմմտ.
Բիւզանդիոն 1900, Թ. 1066 և Հանդէս Ամ-
սորեայ 1960, էջ 8) և որուն մասին Ա. Սա-
հակեան արտայայտուած էր թէ այդ անու-
նով վանք Շապին Գարահիսարցիներուն ան-
ձնութիւն է (Բիւզանդիոն 1900, Թ. 1091, ուր
անդրադարձում Պարեանի Թ. 1127 և նոյնին
լուրիայն սրբագրութիւնը Հմմտ. Հայ վանո-
րայք, էջ 165—166): Պարեանի համաձայն
Չմշկածագի այս վանքին մէջ 1428ին գրուած
է Տօնական մը որուն Յիշատակագրութեան
կարեւոր մասերը են. Փառք... որ ետ մեզ

կարողութեան հասանել յետին դիմ ոսկի
փոր Տաւնականիս յաստուածաբան ուխտս
որ կոչի Կողուց վանք ընդ հովանեաւ սրբոյն
Գրիգորի Լուսաւորչին և սուրբ Նշանացն
Գրիգորի. առաջնորդութիւն երջանիկ...
Գրիգորի. առաջնորդութիւն երջանիկ...
մեծ բաբունապետին Յակոբայ... Արդ գրե-
ցաւ սա ձեռամբ նոյն տխմար Կարապետի և
անպիտան գրչի: Յամի Պէ՛ թուականի մե-
րումս տուեալի... Արդ աղաչեմ զամենե-
սեան յաղօթս ձեր յիշել զբազմամեղ գրեցս
Կարապետ և զծնաւորսն իմ զխաչատուր և
զԱղբարաց... այլ և զհոգեւոր հայրս մեր
զՄեղիքիս թաւաճողութիւն և զբարեքս իմ
յիշեցէք ի Քրիստոս զհոգեւոր եղբարքս իմ
զԱղբարաց սրբաւորութեան կրօնաւոր, զեղբար
զԱղբարաց սրբաւորութեան կրօնաւոր, զեղբար
մեծ հոգեւորին Յակոբայ... և զաշա-
կերտքն իւրեանց զՅովհաննէս գրոց աշա-
կերտ, և զՅովհաննէս Ղազարոսեցն, զՄի-
թար և զՄարտիրոս, զՀայրապետ և զՄար-
տիրոս, զԴանիէլ վաղակալն և զներսէս փի-
լիսոփայն, զՄկրտիչ և զԹուման և զայլ
միաբանք վանացս, զսարկաւազ և զաշխար-
հական... Ընդ նմին և Աստուած ողորմի ա-
սացէք Յովհաննէսին, Եղիսին և Իկտիլ մա-
մուն. զի գիրքս բոլոր ի յԱրժէք գրեցաւ, զի
մուն. զի գիրքս բոլոր ի յԱրժէք գրեցաւ, զի
փախած էաք ի Քրիստոս և ի սոցա տունն
հանդէպ (Տաւեան Մայր Յուլյ., էջ 583):
Հանդէպ (Տաւեան Մայր Յուլյ., էջ 583):
Տարիներ առաջ «Գրեցաւ ի յԱրժէք» նախա-
դասութեան և հետեւեալ Յիշատակագրու-
թեանէն, ուր Կողուց վանքը կապուած է Կար-
միր վանքի հետ եղբարեկցութեամբ էինք թէ այս
միակի հետ եղբարեկցութեամբ էինք թէ այս
վանքը կը գտնուի Արժէքի մէջ: Յիշատակա-
գրութիւնն է «Վարդան արեղայս (Աւետարան
մը) յանդ հանեալ կատարեցի ըստ իմում
կարի զնդիւր սորա ի թուականին Հայոց ի
22 (1461) ամի յամսեան Մեհակի...
Սկիզբն սորա ի վանս որ կոչի Կողուց ընդ
հովանեաւ Ս. Լուսաւորչի և Կարմիր տին
սուրբ Նշանի» Թորոս Աղբար Բ. էջ 265):
Արդ կը խորհիմ թէ այս եղբարեկցութիւնս
չառ ամուր հիմերու վրայ չէ յեցած, զի Տօ-
նական այնպէս կ'երեւայ թէ Արժէքի մէջ,
ուր Կարապետ կը հանգչէր Յովհաննէսի, Եղի-
սի և Իկտիլի տունը, հոն ևս զբաժնւած
էր թէ Արժէքի մէջ հիմնուած
Կողուց անուն վանքի մը մէջ
թէ ևս հաւանականութիւն մը չի մերժուիր,
բայց նժարը ժողովականի վրայ կը միտի
հանգչիլ, երբ, նկատենք որ Չմշկածագի
Կարմիր վանքը գրուած է միշտ Ս. Նշանի

հոգեւորին տակ և այդ թուականներուն կը
յիշուի Մեղիքիս թաւաճող Կարմիր
վանքի, որ կրնար իր խնամքին ենթակայ
ունենալ նաեւ մերձաւոր Կողուց վանքը
(Հմմտ. իմ Վասպուրական-Վանի վանքերը,
էջ 417):

6. ՇԵՆԿԱՆ, ԲԱՂԱՐՈՒՆ, ԳՈՐՈՐԻ ՆԻ ՎԱՆՔ ԳԻՒ-
ՂԵՐՈՒ ՎԱՆՔԵՐԸ

Կաւանդութիւն Չմշկածագի այս չորս
գիւղերն ալ իրենց մէջ և կամ չըջակալքը
ունեցած ըլլան վանքերը (Բիւզանդիոն 1906,
Թ. 3014):

7. ՍՈՒՆԿ ՍՈՒՆԿ ՎԱՆՔ

Չարմանալի անունով այս վանքը կա-
ռուցուած է խաչատուր Գիւղի մէջ, բայց
չառունց աւերուած և անշարժ (Բիւզան-
դիոն 1900, Թ. 1083 և 1906, 3014):

8. ՎԱՆՔԱՅ ԿԱՄ ՎԱՆՔԱՅ ՎԱՆՔԸ⁴

Չմշկածագի Չուղուր կամ Չուխուր
գիւղի մէջ: Երկար առեւն է վեր արդէն ա-
ւերակ (Բիւզանդիոն 1900 Թ. 1083, 1906,
Թ. 3014, Մասիս 1886, էջ 818, ուր կ'ըսուի
թէ վանքը մղկիթի վերածուած է: Թորոս
Աղբար Բ. էջ 154):

9. ՎԱՍԻԿԱՅ ՎԱՆՔԸ

Աւերակ վանք մը Չմշկածագի, բայց եր-
բեմն մեծաւն. Վասիկաւան գեղին կից (Թո-
րոս Աղբար Բ. էջ 117—8, և Բիւզանդիոն
1900, Թ. 1127 և 1906, Թ. 3014):

Հ. Հ. ՈՍԿԱՆ

⁴ Մանրամասնութիւն մը մէջ կայ «Վերջին կազմող
երգարանին ի վանքն ի յանապատին ի դուռն Ս.
Աստուածածնին ձեռամբ Սարգիս երիցոս ի թվ. ՌԿ»
(1611, Ակինեան, Հաւաք. Յիշատ. Հ. Պատուրեանէ):
Այս կարելի չէ մերձեցնել վանքայ կամ վանքակ
վանքի: